



ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

Խմբագրանշիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ 10 ռուբլի, կես տարվանը՝ 6 ռուբ.
Առանձին համարները՝ 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական նոր տեսակետներ. Ուղղափառական հաղթանակ. — Ներքին Տեսչութիւն. Օրէցորդ. Ուղղափառ կուսակցութեան միջոցները քանակ. Հայոց թատրոն. Նամակ բազմաթիւ. Նամակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՄԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ թիւրքերէն. — ՀԱՅԿԱՅԻՆ ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՆԱՐԵԶԳԻՆ ՇԱՆ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ

Վերջին տարվայ դեպքերը հիմնական քաղաքական խնդիրներ են յարուցել եւրոպայում և Ամերիկայում. Նա մանաւանդ շատ մեծ լրջութեամբ վերաբերվում են խոշոր կուսակցական միջազգային խնդիրներին անգլիացիները և ամերիկացիները. Անգլիական «Contemporary Review», «Nineteenth Century» և ուրիշ նշանաւոր հանդէսներ նուիրեցին մի շարք յօդուածներ Անգլիայի, Ամերիկայի և եւրոպական պետութիւնների բռնած զինքներին, որոնց ներպատակն էր հաշտեցնել պետութիւնների շահերը՝ ընդհանուր մարդկութեան բարձրագոյն շահերի հետ:

Ամերիկական «Forum» ամսագիր վերջին, մարտի համարում գետեզգած են մի քանի յօդուածներ, որոնցից յիշատակենք պրօֆէսոր Ստերլուպի ընդարձակ յօդուածը անգլո-ամերիկական դաշնակցութեան մասին: Ստերլուպը այն կարծիքի է, որ Անգլիան և Ամերիկան չը պետք է միմեանց հետ կռուին, միմեանց հետ մրցեն և Մօնթրէլի

վարդապետութեան սկզբունքները զործարկեն միմեանց դէմ: այլ ընդհանրապէս պէտք է միմեան և կապին իբրեւ մի մեծ անգլիական ազգ, որի կուսակցական և հասարակական իդէալները վարուց միմեանց կապել են բոլոր խոշոր և համաշխարհային հարցերում: Այդ դաշնակցութիւնը այնուհետեւ թող Մօնթրէլի սկզբունքները զործարկեն այն տարրերի դէմ, որոնք խանգարում են այդ երկու մեծ ազգերին իրաւորեալ իրանց առաջադիմութեան զործարկելու միմեանց օգնելու այն դեպքում, երբ յարուցված է, օրինակ, մի այնպիսի տեսութիւն խնդիր, ինչպիսին է հայկական խնդիրը: Կա արդարեւ կը լինի մի նոր քաղաքականութիւն: Երբ այդպիսի դաշնակցութիւն տեղի կունենայ, այնուհետեւ երկու ազգերի մէջ եղած անհամաձայնութիւնները կը վերանան, իսկ միմեանց օգնելով կուսակցական երկու կողմն էլ:

Ամսագիր «նոյն համարում» պրօֆէսոր Գեֆկէն գետեզգած է մի յօդուած՝ «Եւրոպայի դրութիւնը» վերնագրով, որով յօդուածագիրը մերկայացնում է անգլիական կառավարութեան մի քանի դիտարկումները օսմանն անպետեղութեան վերաբերութեամբ: Գեֆկէն ի միջի այլոց յայտնում է հետեւեալը: Սօսքիւրի ունի զօրեղ զփոշուրեան առիթ՝ սուլթանի դէմ, որը մինչև այժմ շատերին անյայտ է: Անգլիացիները ցանկանում են իրաւունք ստանալ երկաթուղու դիմ անցկացնելու Պորտ-Սայդից մինչև Պարսից ծոցը և այդպիսով մի կարծ ճանապարհ բանալ դէպի Հնդկաստան: Բայց սուլթանը, որ անգլիացիներին երկաթուղու լինելուց արդէն զփոշ է, ամենեւին հակված չէ նրանց յանձնել երկաթուղի անցկացնելը՝ թիւրքական Արաբիայի միջով: Թիւրքիայի համարում է և Ռուսաստանը, որը ոչ մի ցանկանութիւն չունի դիւրացնել անգլիացիների մուտքը դէպի Պարսից ծոցը:

Այդպիսի շահերի յետեւից ընկնելով ի հարկէ եւրոպական դիպլոմատիան չէ կարող մարտախրատական հարցեր վճռել: Եւրոպական քաղաքականութեան լուսաւոյն մտածողները արդէն բացարձակ պահանջում են, որ պետական անձինք ձեռք բաշեն քաղաքականութիւնը ծառայեցնել մանր մանր շահերի, որոնց պատճառով պետութիւնները մեծ կասկածով են վերաբերվում միմեանց ամենամեծ զործարկում անգամ, ինչպէս, օրինակ, Թիւրքիայի բրիտանականների վիճակի բարելոցումը:

Երբ քաղաքականութեան ընդհանուր ընդհանրութիւնը կը փոխվի և մարդկային բարձր շահերը կը դառնան հիմք պետութիւնների յարաբերութիւնների և ընդհանրութեան համար, այն ժամանակ միայն կարելի է յուսալ, որ միջազգային խնդիրները բաւարար և արդար լուծուած կը ստանան:

ՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՀԱՅԱՐԱՄԵԱԿԸ

«Մշակ» խմբագրութիւնը ստացել է հետեւեալ հրաւեր Ունգարիայի ազգային հաղաւթական առիթով կազմված ցուցահանդէսի վարչութիւնից:

«Պարոն խմբագիր.

«Ունգարական պետութիւնը պէտք է տօնէ իր հաղաւթականը: Կառավարութիւնը և ազգը ոչ մի քանք չեն խնայի, որպէս զի այդ տօնախմբութիւնը, որ զրկած է Նորին Կայսերական և առաքելական արքայական վեհախորհրդի անդամներէն, կառավարի այն ճշգրտութեամբ, որ վայել է այդ դէպքի հանդիսաւորութեան: Այդ պատճառով քաղաքական աշխարհը, որ հրաւիրված է այդ տօնին, ներկայ կը լինի Ունգարիայի պատմութեան զանազան փուլերի հաւատարմարարացանքներ և անձամբ զապախար կը կազմի այդ երկրի այժմեան բարեկեցութեան և ազգային երաշխաւորութեան մասին: Հաղաւթականը կը տօնախմբվի պաշտօնական տօներով, մի պատմական ցուցահանդէսի և մի ազգային աշխարհահանդէսի միջոցով, և տեղի կունենան բազմաթիւ ժողովրդական տրամադրութիւններ:

«Տօնախմբութիւնները կը սկսվեն 1896 թիւ մայիսի 2-ից և կը տևեն մինչև հոկտեմբերի վերջը: Նրանց կենտրոնը կը լինի հաղաւթական ցուցահանդէսը, որ կը բաղվի մայիսի 2-ին Ունգարիայի առաքելական թագաւորի ձեռքով, իշխանական հրերի և զինատեսակի անգամների ներկայութեամբ, բացման հանդիսին ներկայ կը լինեն զիպլոմատական մարմինը, ունգարական կառավարութիւնը, Աստուծո-Ունգարիայի միաբարձրները, պարլամենտի ներկայացուցիչները, պատգամաւորութիւնները և այլն:

«Ունգարիայի միաբարձրների խորհրդի պարոն Նախագահի (Հաղաւթական տօնախմբութեան վարչութեան նախագահ) անունով և հրամանով, մենք պատիւ ունենք հրաւիրել ձեր յարգելի

լրագիրը՝ 1896 թիւ ազգային ցուցահանդէսի բացման հանդէսին և այն բոլոր տօներին, որոնք կը կատարվեն ունգարական պետութեան հաղաւթական առիթով: Մենք խնդրում ենք ձեր թանկագին աջակցութիւնը մի ազգի համար, որ հպարտ է իր աշխարհիկ ընդունելով և իր գեղեցիկ ձերբերով, որ յարատեւում է իր աշխարհականութեան մէջ և յոյս ունենք, որ դուք կը բարեհաճէք հաղորդել ձեր ընթերցողներին այն սուղաւորութիւնները, որ կը ստանայ ձեր պատգամաւոր մեր ազգային տօներէն և կը հանդիսանայ հաւատարմարար պատմաբան այն հանդիսաւոր և հաղաւթական դէպքի, ինչպիսին է մեր հաղաւթականը:

Վ և բ ա տ ե ս ու չ ազգային Հաղաւթական ցուցահանդէսի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Օ Ր Է Յ Օ Ր

XXII

Աղքատ երուսաղէմի միաբան, և 200 հազար ռուբլի հարստութիւն. — Ինչ կուզէ՞ք, տեղեք, բայց դա տարօրինակ, զարմանալի, նոյն իսկ անհաստատելի է: Բայց ստիպված ենք հաւատալ, որովհետեւ «Մշակ» Կ. Պօլսի թղթակիցը այդ լուրը հաղորդել է հաստատ աղբիւրից, լաւ տեղեկ է Ալֆրէդեան արքայական պալատին, («Մշակ» № 46):

Երեւակայի կարող էլքը, ընթերցող, որ պարտքերի տակ թաղված երուսաղէմի միաբանը, աղքից կօպէկ-կօպէկ փող մտաբանող այդ վանքի պատրիարքական փոխանորդը, Կ. Պօլսում նստած, իր գրպանի մէջ ունի 200 հազար ռուբլի հարստութիւն, ընդունելու կէտը՝ 100 հազար ռուբլի, որը երեւան է գալիս միայն պատահական, նրա մասից չեալու:

Մեզ միանգամայն անհասկանալի է մեր սեպագործների հաղեւթութիւնը. — որքեք չունեն, ընտանիք չունեն, բայց փողը այնպէս են պահում, թաղանթում, որ կարծէք թէ իրանցից չեալու հարկը մարդ պէտք է կերակրվի այդ փողով: Մեր եպիսկոպոսների և վարդապետների իդէալը վերջապէս այնքան սահմանափակ է, — լաւ ուտել, լաւ խմել, կաշառքի համար փող ունենալ և ազգականներին էլ հարստացնել, — որ դրա համար բոլորովին կարելի չը կայ կոպեկով, գողանալով, թաղանթով զիջել 50 հազար, 100 հազար, նոյն իսկ 200 հազար, այն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՍՐԷԻՆ ԳԻՆՆԱՅԻՆ ՇԱՆ

II

Նաթէղլին Շահի մանրամասն կենսագրութիւնը և յիմնական թագաւորութեան պատմութիւնը նկարագրելուց առաջ, մենք հարկաւոր ենք համարում ներկայ յօդուածը նուիրել այն հարցին, որը ներկայումս ամենից շատ զբաղեցնում է մարդկանց և ամենից շատ հետաքրքրում է ընթերցողներին. այդ հարցն է — ով պէտք է լինի Պարսկաստանի Շահը և ինչու: Եւ կայանում գահաժառանգութեան մասին ծագած խնդիրը:

Յայտնի է, որ զեռ. Նաթէղլին Շահի կենդանութեան ժամանակ նրա առաջ օրդի Մատուց Միրզա, որ կրում է Զիլի-Սուլթանի (թագաւորի ստուգ) տիտղոսը, աչք էր դնում գահաժառանգութեան վրա և ամենին չէր թողնում իր ոյրը և աստեղծութիւնը դէպի իր եղբայրը, պաշտօնապէս գահաժառանգ ճանաչված Մուղաֆֆէր-Լեղլին: Իր այդ աստեղծութիւնը և ոյրը նա հասցրել էր մինչև այնտեղ, որ պատուիրել էր սուլեյ յապկապէս մի թուր, որը ինքն միշտ կրում էր և որի ա-

նունը դրել էր Մուղաֆֆէր-Երուզ (Մուղաֆֆէրի սպանող): Այս թուր — պարծնում էր նա ամեն տեղ բաց համարձակ — ես ձեռք կը բերեմ իմ այն իրաւունքը, որ զլացվում է ինձ և որը օրէնքով ինձ է պատկանում, որովհետեւ բոլոր պետութիւնների մէջ զահի ժառանգութիւնը պատկանում է թագաւորի անդամներին որդուն, իսկ Նաթէղլին Շահի անդամների որդին ես եմ:

Բայց թէ ինչու Զիլի-Սուլթանը չէ համարվում գահաժառանգ, այլ նրանից կրտսեր եղբայր Մուղաֆֆէր-Լեղլին Միրզան, դրա պատճառը հետեւեալն է: Յայտնի է, որ Պարսկաստանում զեռ. ամենահին ժամանակներից սկսած, ամեն իրողութիւններ, արհմանից պատերազմներ նրա ժառանգների մէջ: Մինք հիմնելով իր աւագութեան վրա, երկրորդը հիմնելով այն իրողութեան վրա, որ ինքն հօր ամենասիրելի զաւակն է եղել, երրորդը հօր կտակի վրա, չորրորդը այն հանգամանքի վրա, որ իր մայրը արքայական ցեղից է, պահանջում էր գահը և իրան Շահ էր հրապարակում, և ով աւելի զօրեղ էր գտնվում, ով յաղթում էր պատերազմով կամ ուժով ինքն էր բռնում գահը, հոգեւորականութիւնը և ժողովուրդը, նա էլ դառնում էր Շահ և

դառնալով Շահ՝ անխնայ էր լինում դէպի իր մրցակիցները. կամ կուրացնել կամ սպանել էր տալիս նրանց, կամ ներքինացնում Որոշ օրէնք, կարգ գահաժառանգութեան մասին չը կար:

Կամենալով վերջ դնել առաջադիմութիւններին, Ֆաթ-Ալի-Շահի որդի հուլաւար Աբբաս-Միրզան ստիպեց հօր հրատարակել մի օրէնք, որով գահաժառանգ ճանաչվում է Շահի այն որդին, որի մայրը Վաջարան իշխանական ցեղից է: Ռուսաստանը 1828 թիւ թիւրքմէնչաթի դաշնագրով, ինչպէս և Անգլիան ընդունել են այդ օրէնքը և պարտաւորվել պաշտպանել այդ օրէնքի համաձայն նշանակված գահաժառանգին բոլոր ուրիշ թիւնածուներին դէմ: Մահմադ Շահ, Նաթէղլին Շահ թագաւորել են այդ օրէնքի համաձայն:

1849 թիւն ծնվեց Նաթէղլին Շահի անդամների զաւակը՝ Մատուց-Միրզան, բայց նա չէր կարող հրատարակել գահաժառանգ, որովհետեւ նրա մայրը մի հասարակ գեղջիկուհի էր, որի հետ Շահը ամուսնացել էր սիդալով՝ լոկ գեղջիկութեան պատճառով: Բայց չուտով 1852 թիւն Շահի օրինաւոր և իշխանացի կինը ծնեց մի արու զաւակ, որը կոչվեց Մուղաֆֆէր-Լեղլին (Յաղթանակ հաւատի) և զեռ. 6 տարեկան ժա-

մանակ, 1858 թիւն, հրատարակվելով գահաժառանգ, ուղարկվեց Թաւրիզ. իբրեւ Ատրպատականի փոխարքայ, որովհետեւ, ընդունված աւանդութեան և սովորութեան համաձայն, թագաժառանգները կամ վարիսները պէտք է բնակվեն Թաւրիզում և լինեն Ատրպատականի փոխարքայ: Այդ օրէնք, այն է 1858 թիւն, Մուղաֆֆէր-Լեղլին Միրզան շարունակ բնակվում է Թաւրիզում և վարում է Ատրպատականի փոխարքայութիւնը, ունենալով իրան մի օգնական-վեզիր, որ կոչվում է փի չաբար (զործերը վարող):

Մանկութիւնից ստրկելով Թաւրիզում, Մուղաֆֆէր-Լեղլին կրթվել է Թաւրիզի հոգեւորականութեան ղեկավարութեամբ և ստացել է բոլորովին կրօնական կրթութիւն: Թէև Նաթէղլին Շահի հրամանով նա ունեցել է և մի քանի օտարազգի ուսուցիչներ, որոնք աշխատել են սովորեցնել նրան ֆրանսերէն և մի քանի դիտութիւններ, բայց նա իր հոգեւորական դաստիարակների ուղղութեան հնօրէն, չէ կարողացել օգուտ քաղել այդ դասերից: Այնու ամենայնիւ, նա չափազանց սէր ունի դէպի մի քանի արուստները, ինչպէս լուսանկարչութիւնը և շատ սիրում է լցնել իր սենեակները զանազան գործիքներով, ինչպէս Փօօթաղափ, տէլէֆօն և այլն:

էլ այնպիսի ժամանակ, երբ վանքը խրված է պարտքի մէջ, և մտում է՝ իր պարտքը հանգցնելու համար...

Շատ է պատահել, որ նոյն իսկ մեր հասարակական մեծ գիտնականները ժամանակ, երբ Հայաստանում տիրում էր անասիկ սով և դադարեցնում էին բայց անուս կրօնապետները՝ վանքի օգտին, նրա պարտքերը թեթեւացնելու համար։ Եւ երբ բողոք էր լինում այդ անտեղի հանգանակութեան դէմ, սագերն սկսում էին կոկոս... Բայց ահա թէ այժմ ինչ է դուրս գալիս, դուրս է դալիս, որ երեսուցյակ միաբանը՝ պատրիարքական փոխանորդ Ալեքէրեան մօտ 200 հազար փող է դիզել այն տարիների ընթացքում, երբ հասարակութենից փող էին ժողովում նոյն վանքի օգտին՝ նրան անանկութենից փրկելու համար...

Խեղճ ազգ։ Վարերի, երկար դարերի ընթացքում անապին հարստութիւններ տուեցիր, քու բարեգործութեան ամբողջ արդիւնքը այդ վանքերին և նրա ղեկավար սեպուխներին նուիրեցիր, — և այժմ անանկութեան ետ, թէ ինչպէս նոյն այդ րօպաներին, երբ քո վանքերը աւերակ են, անայի, պարտքի մէջ լըված, զուրկ միջոցներից, — վանաշարերը կամ կենդանութեան ժամանակ գիւղեր են գնում ազգականների համար, և կամ մեռնելով՝ թողնում են հարիւր հազարներ, բանկիրներին միայն յատուկ փողի կոյտեր...

Խեղճ ազգ...

Խ. Մարտիկան

ՈՒՂՏԸ ԿՈՒԼ ԵՆ ՏԱԼԼԻՍ ՄԺԵՂՆԵՐԸ ԳԱՄՈՒՄ

Քաղաքային կրէզիտային ընկերութեան արդիւնքի 23-ի ժողովը՝ հազիւ ազատվեց մի մեծ սկանդալից։ Մի խումբ մարդիկ, որոնք բանկային չընդունելու յայտնի են իբրեւ իշխան Նապոլէոն Ամատուտու համակրողներ և կողմնակիցներ, որոնք մի քանի տարի, մի քանի ամիս առաջ Ամատուտու գործողութիւններին մէջ միայն լինելով, օգնելով ձեռք բերելու էին խօսում բանկի շահերի, լիազօրների ապահովութեան, գանձապահի զեղծումներին մասին և, ու լայտառակութիւն, մինչև իսկ հարց դրեցին գանձապահ Լ. Տիգրանեանին հեռացնելու մասին...

Բայց ինչ է գանձապահի յայտնաբերումը, — մի փոքրիկ շեղումն ձեռնարկութիւնից։ Կասեցին մէջ րէզիդուրը գտաւ 5000 ռուբլու փոխարէն՝ 5000 ռուբլու օրէկագիրներ, որ նա գնած և պատրաստած է եղել Ներսիսեան դպրոցի համար, նոյն իսկ վարչութեան մի քանի անդամների ոչ պաշտօնական համաձայնութեամբ, և ահա ձեռնարկութեան երկրպագուները, Ամատուտու լինելով անպատասխան պաշտպանները թըմբուկ զարկեցին, աղմուկ հանեցին, արտակարգ ժողով գումարեցին, և հարց դրին՝ «Ձը լինի»։

Խեղճ կրէզիտային ընկերութիւն, քեզ չէ միջամտել խաղաղ կեանք վարել։ Եւ երբեք էլ չես վարի, քանի որ քո ներկայացուցիչները այնքան

Այն հանգամանքը, որ նա մինչև այսօր ձեռք տուած չէ ցոյց տուել ձանադարձորդելու Եւրոպայ, որ նա հեռու լինելով իր հօրից, առիթ է միջոց չէ ունեցել ծանօթանալ երկրի ընդհանուր կառավարութեան գործի հետ, որ նա չունի և չէ ցոյց տուել գինուորական կրթութիւն ու պատեհաբանական ոգի, առիթ է տուել կատարել ենթադրելու, թէ նա, իբրեւ Շահ, կարող է անընդունակ հանդիսանալ և անկարող կը լինի կառավարել երկիրը իր հօր՝ Նապէղգին Շահի օգով և ուղղութեամբ, ու նրա օրով հոգեորականութիւնը նորից ձեռք կը բերի իր առաջվայ ազդեցութիւնը և կորստաբեր հեղինակութիւնը։

Ահա ինչ է ասում մի ֆրանսիացի ձանադարձորդ նրա մասին. «Մուղաֆֆէր-Լըզին վալիսահը իր հօր յատկութիւններից ոչ միայն չունի։ Սիրելով գուրաւորութիւնները, նա թողել է իր երկրի (Արապատականի) կառավարութիւնը մի Նաիր-Հոսեփուսին (փոխանորդի), կոյր կերպով հնազանդութիւն է կրել, թշնամաբար է վերաբերվում Եւրոպացիներին, թշնամի է որ և է պրօքրէստ») և քիչ է յարգված զօրքից»։

Անաշու գաղափար կազմելու համար, լսենք և

*) «La Perse» par E. Orsolle. Paris, 1885.

խակ են, որ չը գիտեն՝ զեղծումը զանազան է ձեռնարկութիւնից, և վարժ են չուղղել կուտակ և մեծնները քամել։ Եւ չը գտնվեց մի հեղինակաւոր, զօրեղ մարդ, որ կանգնէր ժողովի մէջ և բարձր ձայնով ասէր, «Լեզեք դուր, ով փարսեցիներ, լուեցեք, որովհետեւ դուք իրաւունք չունեք խօսելու զեղծումների» դէմ. նայեցեք միմեանց աչքերին և ապա միայն համարձակվեցեք ուրիշի աչքերի չիզի դէմ բողոքել»։

Լաւ է գտնել այն, որ բանկը ազատվեց մի մեծ սկանդալից, որ պատրաստում էին վարժված փղերը։ Գանձապահին հեռացնելու հարցը մինչև իսկ չը քուէարկեց։ Բայց «միջին» տեղ բնուողները կարողացան զէթ մի շնորհաբանութեամբ՝ իրանց սիրտը հովացնել, մոռանալով որ ամեն մի օրինաւոր հիմնարկութեան մէջ այդ տեսակ հարցերում վճարական խօսքը տալիս են վարչութեան, հաստատում նրա կարծիքը և նոյն իսկ ընդհանուր ժողովի նիւթ չեն չինում։

Սակայն սա մի լաւ դաս է։ Տեսնե՛ք թէ որոնից յետոյ ինչ պիտի ասեն ձեռնարկութեան երկրպագուները՝ այն լինելով զեղծումների մասին, որոնց բայց անողը եղաւ այժման գանձապահ՝ կրէզիտային ընկերութեան այդ «enfant terrible», որը քու չէ տալիս Ամատուտու երեւելի և անկենդան թափանցանքներն։ Սեպուտեբերը մօտ է։ Տեսնե՛ք։

*

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

«Նա մուտ», կոմէդիա 3 արարուածով, հեղինակութիւն Մարքսեանի

Անկասկած, շատ ուրախակի է, որ հայ բեմի մշակներից միւր, դերասանը ձգտում է նաև հարստացնել մեր բեմի ընդերքում թաքցնուած կան նոր պիէսաներով։

Այն մի գեղարուեստագէտ գրողից — և բեմական գրողը պատկանում է այդ գասակարգին — պահանջվում է, որ նրա ստեղծագործութիւնը համապատասխանի երկու էական պահանջների. գրուածի մէջ պէտք է դուրս բերված լինեն կամ տիպական պատկերներ, այդպէս կենսի մէջ գոյութիւն ունեցող իրական տիպեր, ընդհանուր և ոչ բացառիկ տիպեր, կամ իրէպական տիպեր, որոնք բարոյական շնչում գործելով հասարակութեան վրա, զրդեն նրան ձեռք տալով այդ իրէպական տիպը իրականացնել կենսի մէջ։ Այդ ամենաառաջին պահանջն է, որ անվում է ամեն մի պիէսայից. իսկ ինչ վերաբերում է տիպերի գեղարուեստական մշակութեան, հոգեբանական ձիւղ վերլուծութեան, այդ արդէն կախված կը լինի հեղինակի տաղանդից և ընդունակութիւնից։ Այդ տեսակէտից մենք պէտք է նայենք «Նա մուտ» նոր պիէսայի վրա։

Բայց առաջ պատմենք այդ պիէսայի համառոտ բովանդակութիւնը։ Գէորգ Թորմազեան ուսանողը, աւարտելով իր ուսումը համալսարանում, վերադառնում է Թիֆլիս։ Նա սնի մի պառաւ մայր, Բեթանը, մի քոյր՝ օրիորդ Լի-

մի ուսու ձանադարձորդի կարծիքը։ «Ընդհանուր կարծիքը վալիսահի մասին հետեւեալն է» — թոյլ գուրկ բնաւորութիւնից, ատում է եւրօպացիներին և ամեն ինչ որ եւրօպական է. թշնամի է ամեն մի պրօքրէսի և չէ կարողացել իրան ցոյց տալ ոչ զօրքի մէջ, որը նրան չառ էլ չէ յարկաւարութեան գործի մէջ։ Բայց ամենազաւալին այն է, որ նա, ինչպէս ասում են, ֆանատիկ է և գտնվում է հոգեորականութեան ձեռքում, որը ոչ միայն նրան չէ յարգում, բայց և ատում է, բայց իր ձեռքից բաց չէ թողնում, իբրեւ ապագայ գործիք իր ծրագիրները առաջ տանելու համար։ Բայց պէտք է արդար լինել և աւելացնել, որ եւ լսել եւ վալիսահի մասին և եւրօպայի ուրիշ գաղափարներին, որոնք ամեն ներս նման չեն վերելում բերածներին։ Մի շատ բարձրատեսի անձն ինձ ասաց, որ նա լաւ ծանօթ է Մուղաֆֆէր-Լըզինի հետ և բացի լալից, ոչինչ չէ կարող ասել նրա մասին։ Նա աւելի խելօք է, քան երեւում է, և կը գալ մի օր, երբ նա այդ ցոյց կը տալ և գործով կապացուցանի։ Բայց որովհետեւ նա համեմատաբար զուրկ է ինքնական միջոցներից, նրա զօրքը վատ է յարգարված, կազմակերպված և վատ կրթված, ուստի նրա շանքերը գանձ ժառանգելու մասին բաւա-

ղան, որ աւարտել է իր ուսումը գիմնազիայում և մի թեթեւօրէն եղբայր, Ստեօպան, որ գիմնազիայում է և որի համար մայրը վարձել է սիբիւրէտիտ, ուսանող Գարեգինին։ Այդ ընտանիքը ունի և մի հեռաւոր ազգական՝ Զախար Ծաքարգուզով, որ Թիֆլիսի հին սերնդի լաւ ներկայացուցիչներից միւն է, այսինքն խղճմանքով, քչով բաւականացող և նամուսաւոր մի ծերունի։ Գէորգ Թորմազեանը հարուստ մարդ չէ, հայրը թողել է չափաւոր հարստութիւն և մի այգի, որ բերանացի կտակել է իբրեւ բաժինը իր Լիզա աղջկան։ Բայց նա կամենում է հարստանալ և հարստանալ միանգամից, դառնալ կրէստ, իսկ որովհետեւ կրէստները այժմեան ժամանակում աղբում են միայն նաւթային քաղաքում — Բազում, ուստի նա աչքը անկում է Բազուի հարուստ նաւթագործ Գուրգալեանի միակ ժառանգուհի — աղեղ Զեղինէի վրա և Զախար Ծաքարգուզովի միջոցով կարողանում է համեմատել իր նպատակին։ Այդ գործին քիչ չէ օգնում և Գեթեմը, որը իր ամբողջ ընտանիքի ապագայ բախտաւորութիւնը տեսնում է այդ ամուսնութեան մէջ։ Այդ միջոցին օրիորդ Լիզան էլ սիրահարվում է իր գիմնազիայի եղբայր Ստեօպանի բեպէտիտոր ուսանող Գարեգինի վրա, որը նոյնպէս սիրում է Զեղինէին և աւարտելով ուսումը ու դառնալով փաստաբան, ամուսնանում է Լիզայի հետ, լաւ խմանալով որ նա բացի մի այդուց ոչինչ չունի։ Քրոջ սիրահարութեան և ամուսնութեան օգնում է գիմնազիայի Ստեօպան, որ այնքան պարագլուխ չէ իր ուսումով, որքան որսորդութիւնով, հնարով, գիմնազիստութեան ետեւից ընկնելով և աշխատելով սիրահարեցնել իր վրա հարուստ Մադրիօլի աղջկան, թէ ինչն միայն Գ-րջ գաստան աշակերտ է։

Այս բոլորը մենք իմանում ենք նոյն իսկ առաջին արարուածից։ Մնացած երեք արարուածներից մենք տեսնում ենք Թորմազեանի արդէն աստիկ հարստացած, իսկ Գարեգինին — իր ձաւատի քրտինքով ապրող փաստաբան։ Թորմազեանը իր կնիջից դրված զուրկ է անում իր անից իր հարազատ մօրը՝ Գեթեմին, իր եղբորը՝ Ստեօպանին և չէ կամենում օգնել նրանց, այնպէս որ Գարեգինն է իր բարութեամբ օգնում նրանց։ Թորմազեանը մինչև անգամ չէ կամենում վճարել Ստեօպանի ուսման վճարը, լաւ խմանալով որ սպանում են նրան արտաքին գիմնազիայից։ Այդ բաւական չէ. նա իր փեսայ Գարեգինին առաջարկում է պաշտպանել մի անազնիւ և յայնաւոր գործ և կամենում է կեղծ մուրհակներ չինելով կրկնապատկել իր հարստութիւնը. երբ Գարեգինը, զարացած մեքում է այդ անազնիւ առաջարկութիւնը, նա չէ խղճաւորվում սեփականացնել իրան և իր քոյր Լիզայի միակ զոյքը — այգին։ Նա իր լրբութիւնը հասցնում է մինչև այնտեղ, որ մօր արտաւարտից աղերսանքին, թէ չորդի, քեզ մեծացրել եմ, կաթ եմ տուել, պատասխանում է. «բա՛նք թա՛ն, ինչ արե՛ք կաթը, ասա վճարեմ և կոյրի իմ տանից ու զուրկ է անում թէ մօրը, կան թոյլ են»)։

Մեր անձնական կարծիքը Մուղաֆֆէր-Լըզին վալիսահին մասին հետեւեալ է։ Մանկութիւնից մեծանալով Թաւրիզում, որտեղ չի հոգեւորականութիւնը ամենաազդեցիկն է ամբողջ Պարսկաստանի մէջ, երբեք չը հրաւիրվելով Շահին ասարակել երկրի կառավարութեան գործին և վարած չը լինելով որ և է պատասխանատու պետական պաշտօն, ինչպէս Շահի միւս որդիները, այլ լոյլ Արապատականի կուսակալի անուանական պաշտօնը, որ և է ներգործական դեր կատարած չը լինելով պետական որ և է քաղաքացիական կամ գինուորական ասպարիզում (այդ հանգուցեալ Շահի և առհասարակ Շահերի ամեն նամեծ սխալն է — գահաժառանգին հետ ուղահեղ պետական գործերից), բնականաբար, այդպիսի աննպատակ պայմանների հնարիւ, Մուղաֆֆէր-Լըզին Միլիթան օժտված չէ վարչական ձիրքերով, չէ կարող ունենալ լուսաւոր հայեացքներ, կուսակալական հակումներ և սպասել նրանից վերանորոգական որ և է ձգտում, Պարսկաստանի ներկայ վիճակի և վարչական կազմակերպութեան մէջ արմատական փոփոխութիւններ մտցնելու հակում, այդ յոյժ ունենալու առիթ չունեցեք։

*) Письма изъ Персін, Е. Бѣлозорскаго, С.-Петербургъ, 1886.

Թէ եղբորը Գրանից յետոյ նա վիրաւորում է և բարի, պարկեշտ Ծաքարգուզովին, անուանելով նրան գող ու արտաքին իր ծառայութիւնից, որպէս զի որ և է կապ չունենալ իր աղքատ ազգականների հետ։ Չը կարողանալով տանել իր զօրանչին և իր կնիջ հացքած վիրաւորանքները, Գարեգինը նախատում է Թորմազեանին և մենամարտութեան հրաւիրում։ Թորմազեանը, թէ չը ընդունում է, բայց յետոյ վախենալով, ներողութիւն է խնդրում նրանից, մօրից և քրոջից և այդ տեսարանին ներկայ Ծաքարգուզովը բացակայում է՝ «թիւ ձեր նամուսին»։ Գրանով և վերջանում է պիէսան և այդտեղ էլ հանդիսանում ենք, թէ ինչի նա կոչվում է «Նա մուտ»։

Արդէն այս բովանդակութիւնից հետո է նկատել, որ հեղինակը ստեղծել է մի և նոյն չը՝ նի երկու հակադիր տիպեր։ Մի համալսարանական ինտելիգենտ, որի միակ իղջալը, բարոյականութեան միակ կողմը — փոքր — է, որի համար չը կալ ոչ մի սրբութիւն, ոչ մի ազնիւ միջոց, ոչ մի բարոյական սկզբունք, մի խօսքով մի կատարեալ բարոյական հրէշ։ Մի երկրորդ համալսարանական ինտելիգենտ, Գարեգինը տիպար է ազնութեան, բարութեան, շիտակութեան, մի խօսքով մի մարդ, որ կենսի մէջ իրագործում է այն, ինչ որ նրան բարոյել է համալսարանը, որ հաւատարիմ է մեռած կենսի մէջ իր դատանած սկզբունքներին, իրէպներին։ Նոյնպիսի հակասական տիպերով զօնաւորված են և երկու կանայք — Զեղինէն ու Լիզան։

Զեղինէն աշխատել է երկու ծայրահեղ հակադիր տիպեր ստեղծել միւր հրէշաւոր, միւսը հրէշաւոր և կեղտոտ։ Բայց ստեղծելով այդ տիպերը նա ամենին չէ բացատրում, թէ ինչ է պատճառը, որ մի և նոյն չը՝ նա, մի և նոյն պայմաններին ենթարկված կենսից, մի և նոյն համալսարանը, մի և նոյն գիմնազիան արտագրել են այդպիսի հակասական տիպեր։ Այլ բան է, եթէ նա ցոյց տար, որ կենսից, առօրեայ և գործնական կենսին է ստեղծել այդպիսի տիպեր, մեռելը բարոյական սկզբունքներ կամ կրթութիւնն է արտադրել այդպիսի հրէշային ընտանիքներին, այն ժամանակ հակամարկ կը լինէր, թէ ինչ գործոնների ազդեցութեան տակ մեր հասարակական կենսը արտադրում է այդպիսի երեւոյթներ և տիպեր, այն ժամանակ և հասարակութիւնը կը հակադարձ, թէ որ երեւոյթների և ֆակտորների դէմ պէտք է կռուել, մրցել։

Մենք ամենին չենք վարանի ասել, որ Արաքսեանի ստեղծած պատկերները տիպական չեն, այլ հիմնված են բացառիկ դէպքերի վրա, որ նրանք գոյութիւն չունեն իրական կենսի մէջ ընդհանրապէս և հետեւաբար, չեն կարող որ և է երեւոյթի արտայայտիչ լինել։

Գուցէ այդ բացառական հանգամանքն է պատճառ, որ թաքցնում հասարակութիւնը սկսեց կասկածել, թէ հեղինակը կամեցել է նկարագրել մի որոշ անձնաւորութեան ընտանիքական կենսից։ Յաւանք կը լինէր, եթէ այդ կասկածը

Բայց, կրկնում ենք, նա վերին աստիճանի մեղմ, բարի և մարդասէր բնաւորութեան տէր մարդ է. ներողամիտ է դէպի քրիստոնեաները և մասնաւորապէս, առանձին խնամք և սէր է ցոյց տուել միշտ դէպի հայերը։ Չենք կարող ասել, որ նա թշնամի է և եւրօպական կուսակալին կամ ծայրահեղ ֆանատիկոս է, որովհետեւ մենք գիտենք, որ նա առանձին հոգս է տանում իր անդամների որդի Մահմադ Ալի-Միրզին, այժմեան վալիսահին, եւրօպական ուսում տալ։ Վերջինիս ուսուցիչն է մի հայ, Միլիթա Անտոն խան երուանդեան, որ մի և նոյն ժամանակ նոր Շահի յատուկ թարգման է և թիկնապահ և ամբողջ ժամանակ թարգմանում է պարսկերէն եւրօպական լրագրութիւնից հետաքրքիր քաղաքական գիտական տեղեկութիւններ և ամեն օր ներկայացնում է Մուղաֆֆէր-Լըզին Միլիթանը, որը մեծ հետաքրքրութեամբ կարդում է։

Համեմատաբար, իր եղբայրների պէս նա հարուստ չէ և չունի լաւ կազմակերպված զօրք, այնպէս որ եթէ նրան պէտք լինի զենքի այժմ ձեռք բերել իր հօր թագը իր եղբայրների հետ կռուելով, դժուար թէ կարողանայ յաղթող դուրս գալ, եթէ չունենայ արտաքին օգնութիւն։

Այժմ անցնենք Զիլի-Սուլթանին։

(ը չարունակվի)

արգարանար, որովհետև այն ժամանակ պիտանայ
պատկերի և տի կերպարանը կը ստանար և, ան-
տարակույս, որ և է կրթիչ ազդեցութիւն չէ կա-
րող ունենալ հասարակութեան վրա և կը կորց-
նէր միանգամայն իր նշանակութիւնը, իբրև
խտորոտական գրուածք:

Կեռ չենք չեղում այն հանգամանքի վրա,
որ պիտանայ գեղարուեստական և հոգեբանական
կողմից չէ դիմանում որ և է կրթիչ ազդեցութիւն,
այն-
քան անբնական, արուեստական են մի քանի
տեսարանները: Մասնաւոր առաջող է Գարեգի-
նի տիպը: Միակ աղողված տիպը—Շարքարու-
ղօն է և այդ էլ զօցէ այն պատճառով որ
նրա դերը կատարում էր հարձակի կօմիկ Տէր-
Վալթեանը և որ նա, արգարե, բացառական
տիպ չէ թիֆլիսի կեանքի մէջ:

Այս ամենից հետեւում է, որ դերասան Արաք-
սեանի առաջին կրկնաւոր փորձը անաղի է, և
մենք խորհուրդ կը տայինք նրան աւելի լաւ ու-
սումնասիրել կեանքը, և այդ կեանքի վրա չը
նայել միայն բեմական տեսակետից:

Ա.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 21-ին

Պարսից Նասր-է-Գոյն Շահի մասին լուրը ե-
րէկ երեկոյեան կայանի արագութեամբ տարած-
վեց քաղաքում: Կեռ կէս գիշերից սկսած խումբ
խումբ մարդիկ մտնում և դուրս էին գալիս պար-
սից հիւպատոսարան, իսկ այսօր վաղ առաւո-
տեանից այնքան մեծ բազմութիւն հաւաքվեց
հիւպատոսարանի առաջ, որ մի քանի կից փո-
ղոցները բռնված էին և կառքերի անց ու դարձը
դադարեւ էր: Հաւաքվեց ամբողջ մասնաւորական
հոգեբանականութիւնը, մեծիւնիցից դուրս հանե-
ցին մեծարարմի ժամանակ դարձած անվաղ գիւ-
ղատները և սկսեց տխուր մեղակոչել:

Շուտով այդ ահազին բաղմունքները չարժեք
տեղից և անցնելով Նիկոլայեւսկայա և Սաղմոս-
յա փողոցները՝ դուրս եկաւ ծովի ափը: Յու-
ղարկաւորութեան մասնակցում էր և երաժշտա-
կան խումբ: Տխուր և սրտաճմլիկ էր տեսարանը:
Առաջից գնում էին ոստիկանները, որպէս զի
կարգապահութիւնը չը խանգարէր: Այսպէս հաս-
րակ ժողովրդից մի ահազին խումբ, վերինին
կապած ևս կոյնիկներից փախկնալով (սուգի նշան
է), յետոյ մօլաների մի ահազին բաղմունքի
իրանց տխուր երգը հնչեցնելով, դրանց յետից
տանում էին չորս ձի թանգազին մետաքսեայ և
չալերով զարդարած, ապա դարձեալ երկու խումբ
հասարակ ժողովրդից՝ իրանց խմբապետներով:
մէկ խմբի մարդիկ զանազան ձայներ արձակելով
ծնծում էին իրանց գլուխները, իսկ միւս խմբի-
նը՝ իրանց կուրծքը: Բոլորի գէղը արտայայտում
էր զանաւոր փախկնալով: Իսկ տեղ տեղ
աչքի էին ընկնում հասարակ մշակներ, բանուոր-
ներ, որոնց գէղը վրա նկատելի էր արտասուքի
կաթիլներ:

Ամբողջ հասարակութիւնը կարծէք այդ բաղմունքի
տանջվում էր մի ցաւով, բոլորն էլ տխուր տըր-
տում գլուխները քաշ ապած հետեւում էին յու-
ղարկաւորութեան: Այսպէս արտայայտեց իր
փախկնալով մասնաւորական տարրը Նասր-է-Գոյն
Շահի մասին առիթով:

Յ. Մարգարեանց

ՆԱՄԱԿ ԽՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալցխա, ապրիլի 17-ին

Կարգաւոր «Մուրա» ամսագրի № 2-ի մէջ, Լու-
սինի ստորագրութեամբ «Կէսը հայոց Բարեգոր-
ծական լինկերութեան կեանքում» վերնագրով
ճշմարտութիւնից հեռու յօդուածը, որանով Բարե-
գործական լինկերութեան Ախալցխայի բաժնի
վարչութիւնը պարտք է համարում մի երկու
խօսք ասելու, և խնդրում է մեր ասելիքին մի
անկիւն չորհել «Մշակի» առաջիկայ համարնե-
րից մէկում:

Յօդուածագիր պ. Լուսինի իր երկար ու բա-
րակ, ի մայցական ու լաւ գրված վերջի-
յեալ յօդուածում, խօսելով գնդապետ, այժմ գե-
ներալ խաճակ Մելիք-Հայկազեանի լինկերու-
թեան պատուաւոր անդամ ընտրելու խնդրի ա-
ռիթով, ի միջի այլոց, ասում է.

1) «Բարեգործական լինկերութեան Ախալ-
ցխայի ճիւղը կամ նրա վարչութիւնը յայտնի է
ընկերութեան կենտրոնին և կենտրոնի ընդհանուր

ժողովներին իր զարմանալի յամառութեամբ չը
յարմարվելու ընկերութեան կանոնադրութեանը»:

2) «Կենտրոնը հայի է պահանջում նրանից—
չեն տալիս, ուշացնում են, ձգձգում, խանգա-
րում»:

3) «Երբ կենտրոնը իր և ճիւղերի նախաձեռնու-
թեան է ներկայացնում ընդհանուր ժողովին—
խորհրդի բարտաւարը, գէթ առեղանցեամբ, յա-
ճախ պէտք է յայտնի, որ Ախալցխայի ճիւղի
նախաձեռնութեան զեռ չէ ստացված, չը նայած որ
գրեւ նրա, պահանջել ենք» և այլն:

4) «Եւ կամ ինքնազուրկ կերպով մի ուրիշ
անկանոնութիւն կը կատարի և չի կամենայ հե-
տա թեմամբ հալատելի խորհրդի ազդարարու-
թեան»:

5) «Մի որ և է զխաղաւանք Ախալցխայի ճիւ-
ղը կը պատճառի ընդհանուր գործին, առանց
զրան անկարելի է»:

Այնուհետև պ. Լուսինին, առաջ բերելով Բա-
րեգործական լինկերութեան կանոնադրութեան
այլ և այլ կէտեր, պատուաւոր անդամ ընտրելու
խնդրի վերաբերեալ իր հայեացքներն է պար-
զում. պարտքը ճշմունք է սպասույցանել, որ իբր
Ախալցխայի վարչութեան պատուաւոր անդամ
ընտրելու վերաբերութեամբ արած առաջարկու-
թիւնը անկանոն է, և թէ վարչութեան այդ վար-
չութեան անկանոն է և այլն: Թողնելով մի կողմ
պ. Լուսինի փաստաբանութիւնները պատուա-
ւոր անդամ ընտրելու խնդրի վերաբերեալ, մի
խնդրի, որի մասին այնքան զրկեց ու խօսեց և
որը, մեր կարծիքով, նորից պարզելու հարկ չէ
տեսնվում, առաջարկում ենք պարտն յօդուածագ-
րին վերոյիշեալ կէտերի ճշմարտութիւնը ապա-
ցուցանել փաստերով և մի միայն փաս-
տերով: Եթէ պ. Լուսինին ընտրութեան չի ու-
նենայ հանդէս գալու իր ասածը վարչութեան
վերաբերութեամբ փաստերով, հրապարակով ա-
պացուցանելու, այն դէպքում վարչութիւնն պա-
րտն գրածը համարելու է ծայր է ի ծայր
ստույթիւն և անխիղճ զրպարտութիւն:

Յ. Գ. Թող բարեհաճի կարգաւ «Տարազ» ի պ.
խմբագիրը սոյն յօդուածը և իր թերթի 9, 10,
13 համարներում վարչութեան նկատմամբ արած
ախարկութիւններին պատասխանը տեսնի տրած
մէջ: Պարտն Տ. Նազարեանի համար այսչափ
բաւ է...

Վարչութեան նախագահ՝ Արքայաճ. Բա-
ղ. Վարչական: Ա. Ղազար. Ս. Սիմեոնեան,
Ա. Ալիսեանց, Յ. Յակոբեանց: Անդամ-
քարտուղար՝ Ս. Տէր-Կարապետեանց

ՆԱՄԱԿ ԽՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալեքսանդրօպոլ, ապրիլի 14-ին

Խօսք չենք գտնում արտայայտելու այն խորին
զգուշանքը, որ զգացինք կարգաւոր «Արձագանք»
ախարկակից Հախումեանի կողմից և միայն վա-
րենիներին յատուկ վարմունքը:

Մենք, գաւառացի երիտասարդներս, «ի վա-
ղուց անտի» ճանաչում էինք այդ պարունին, որին
սովոր էինք տեսնել այս տարի մի լրագրի էջե-
րում, միւս տարի հակառակ լրագրի գրկում, եր-
րորդ տարին մի այլ խմբագրի կրթին փարած:
ճանաչում էինք նրան իբրև մի գրչական, որը
իր գրելը աճողի մէջ է դնում, իբրև մի մտա-
վածաւոր, որը իր գէղը դարձնում է բարձր գին
ստուգին: Բայց խոստովանում ենք, մենք զեռ
այնքան հեռու չէինք գնում, որ վերագրէինք
նրան մի այնպիսի փողոցային, կիսաօտնային յա-
տուկ վարմունք, որը նա ցոյց տուցեց վերջին
օրերս, այն էլ այնպիսի վախկաւ բնաւորութեամբ,
քաղութիւն չունենալով գրչով գրչին պատասխա-
նելու, և այդպիսով իր արդէն արատաւորված
անունը աղտոնութեան մի նոր, անթափանցելի
չեղումով ծածկեց:

Հեռու, անօրէններ, անմաքուր ձեռքերով մի
պղծ էք հայ գրականութիւնը:

Ե. Նալբանդեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՈՐ

Երէկ, ապրիլի 24-ին, կովկասեան կառավար-
չապետ գեներալ-ադիւտանտ Շերէմետով ճանա-
պարհ ընկաւ թիֆլիսից Մոսկւա՝ ներկայ լինե-
լու Նոյս կայսերական Մեծութիւններին թաղա-
գրութեան:

Երիտասարդ Ֆրանսիացի ճանապարհորդ Պիեր

Մօրան (Morane) Սիւսիսի և Թիւլուի գաւառ-
ներում ճանապարհորդութիւն անելուց յետոյ,
ուղեւորեց Երևանեան նահանգը: Նա պէտք է
այցելի Երևան, Եջմիածին, Ալեքսանդրօպոլ, Կարս
և այլ տեղեր: Ինչոյս ենք, որ ամեն տեղ ճա-
նապարհորդը կը գտնի աջակցութիւն ուսումնա-
սիրելու այն խնդիրները, որ նրան հետաքրք-
րում են, այն է անուսական, ազգագրական և
հասարակական խնդիրները:

Մենք արդէն հաղորդեցինք, որ նահանգական
խնամութիւնից հրամայված էր, որ մինչև ապ-
րիլի 20-ը, անցնողաճիւղի կերպով կատարվի
թիֆլիսի արհեստագործների գլխավոր ընտրու-
թիւնը: Սակայն, արհեստագործների գլխավոր
Նատմէնիօ վճակմանապէս հրաժարվեց կատարել
ընտրութիւնը, զանազան պատճառներով: Այդ
պատճառով, ինչպէս հաղորդում է և «Кавказ»
լրագիրը, արհեստագործների աւագները և ձայնա-
ւորները զիմէ են թիֆլիսի ոստիկանապետին,
որը իշխանութեան կողմից նշանակված էր իբրև
ներկայացուցիչ ընտրութիւնների ժամանակ, և
ապա թիֆլիսի պ. նահանգապետին, բողոքելով
Նատմէնիօի յամառութեան դէմ: Այժմ թիֆլիսի
նահանգապետը որոշել է՝ կատարել արհեստ-
ագործների գլխավոր ընտրութիւնը, առանց Նա-
տմէնիօի մասնակցութեան, ներկայութեամբ թիֆ-
լիսի ոստիկանապետ Մատիցկին:

Երեքշաբթի օրը, ապրիլի 23-ին, գիշերվայ
ժամը 12-ին, գինեկաճառ Ոսկանովի որդին
անձնասպանութեան փորձ արեց, Չուրուքէթի
մօտ Կուրը ընկնելով: Չը նայելով որ գետը
խիստ յարգացած էր և հոսանքը կատաղի, բայց
յայտնի լուրով Գոյանեանցին աղողվեց աղատել
զժողովրդին ջրից: Աճնասպանութեան զիմէն
պատճառը, ինչպէս պատմում են, այն է եղել,
որ նրան հայրը արտաքսել էր անից և նա մնացել
էր անապատառ: Երիտասարդին կիսամեռ դը-
րութեան մէջ ոստիկանները տարան ծնողների
մօտ:

Այս օրերս Մօսկւայում լոյս տեսաւ դրամա-
տուրգ Սուրբուկեանցի «Պեպո» կօմէդիայի ու ու-
սերէն թարգմանութիւնը, որ կատարել են
պարսիներ՝ Ա. Մատուրեան և Ի. Վեսելովսկի:
Թարգմանութեանը կցված է Վեսելովսկու մի
փոքրիկ, բայց հետաքրքրական յօդուածը «Պե-
պոյի» և նրա հեղինակի մասին:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը
ստացել է Նիժնի-Նովոգորոդի ցուցահանդէսի վար-
չութիւնից հեռագիր, որի մէջ ասված է, որ բա-
ւեր այն էկսպոնենտները, որոնք կը մասնակցեն
կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան
բաժնին, իրաւունք ունեն պարգևներ ստանալու
իրանց արդիւնքների համար՝ նայած նրանց
արժանաւորութեան:

ԳՐՈՒՄ Գաւառի վաղա գիւղից մեղ գրում են,
«Շիրսի» այն բանի, որ մեր բանաստեղծ Յովհան-
նիսեանց, միշտ գտնվում է Գօրի քաղաքում և
վարում է գործակալի պաշտօն, ապրիլի 7-ին,
Ալեքսեայ տօնի օրը, մեր ժողովուրդը զուրկ
մնաց պատարագից: Հաղորդելով այդ լուրը,
նամակագիրը աւելացնում է. «Հարկատու է ու-
շադրութիւն դարձնել այդ տեսակի գէղերի վրա»:
Սակայն ով պէտք է ուշադրութիւն դարձնի Գրա-
համար հարկաւոր է, որ մեր եկեղեցական
վարչութեան գլխին կանգնած լինեն ընդունակ
մարդիկ—բայց ո՞ր են:

ՆՈՐ-ԲՈՅՈՒՆՆԵՐ՝ մեղ գրում են. «Ապրիլի
14-ին, կիրակի օր, ս. Կարապետ եկեղեցում
լուսաւորական դաստիարակներ ընդունեց Գա-
րանդուզ գիւղացի մի քանի, որին Մկրտիչ ա-
նունը առեցին: Եւ երկու հոգի, որոնցից մինը
կին է, ցանկութիւն են յայտնել լուսաւորչակա-
նութիւն ընդունելու»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլսից մեղ գրում են. «Ինչպէս արդէն
տեղեկութիւն տուած էինք, կը յուսանք որ մի-
շն հիմա կարելի եղած է եւրօպական թերթերէն
ընդարձակ տեղեկութիւններ քաղել խիստ և

կտրուկ ծանուցագրին վրա, որ եւրօպական վեց
պետութիւնները ուղղած են Բ. Գրան, հրապարակ
թուրք կառավարութիւնը յարգել իր ստանձնած
պարտականութիւնները Զէյթունի մասին: Մա-
նուցագիրը կը վերջանար հետեւեալ բառերով.
«Elles (les ambassades) invitent formellement
le gouvernement imperial de respecter des enga-
gements.» Տակաւին չը գիտենք թէ ինչ պէտք է
ըլլայ Գրան պատասխանը, որ այսօր կը սպասուի»:

Լօւրօնից, ապրիլի 16-ից, հեռագրում են «Нов.
Время» լրագրին հետեւեալը. «Daily News»
լրագիրը հաղորդում է այն բանակցութիւնների
մասին, որ տեղի ունեն վաթիկանի և Կ. Պօլսի
հայոց պատրիարք Խմիմբեանի մէջ. միջնորդը
Վենետիկի ս. Ղազար վանքի միաբան հայր Ալի-
շանն է: Խմիմբեան պատրիարքը աշխատում է,
որպէս զի պապը բոլոր հայ-ուսիկներին պատ-
րիարք նշանակի իրան: Մի քանի ուրիշ հայ
եպիսկոպոսներ ևս իբր թէ ճամաճայնվում են
միանայ այդ ուսիկային այն յոյսով, որ պապը իր
հովանաւորութեան տակ կանոնի հայ-ուսիկներին
իբր: Ֆրանսիական մի քանի նշանաւոր կար-
գինաւոր խոստացան պապին, որ Ֆրանսիական
հանրապետական կառավարութիւնն էլ իր հո-
վանաւորութեան տակ կանոնի հայ-ուսիկներին:
«Daily News» լրագրի թղթակցը հայկական
եկեղեցու միութիւնը (ուսիսն) հռօմէականի
հետ միակ միջոցն է համարում, որով կարելի
կը լինի առաջն առնել բոլոր հայերի իսլամաց-
նելուն»:

Կ. Պօլսից գրում են «Daily News» լրագրին,
ապրիլի 25-ից. «Բ. Գոլուր խոստացել է բրիտա-
նական, ուստաց և ֆրանսական զենայանքերին
երեք տուգանով վճարելու Զէյթունի հիւպատոսե-
րի վրա եղած յարձակման փոխարինութիւնը,
բայց մինչև այսօր այդ մասին գրաւոր որ և է
հաղորդագրութիւն չէ ստացվել, այնպէս որ
յայտնի չէ, թէ երբ կը լինի վճարումը:

«Շուրային» զօրավաճի համար մի մատակարա-
րողը հրաժարվել է այլ ևս միս տալուց, որով
հետև իշխանութիւնը դեռ չէ վճարել պայմանա-
գրով որոշած գումարը: Սուլթանն իմանալով այդ
մասին, հրամայեց վճարել մատակարարողին իր
անձնական միջոցներից, այնպէս որ զինուորնե-
րը նորից միս են ստանում»:

Գիարքէթից հաղորդում են, որ նահանգա-
պետն ամեն կերպ աշխատում է լուրջ հոգը հա-
յերի ձեռքից: Պահանջում է բոլորովին կործան-
ված գիւղերի բնակիչներից վճարել հարկերը,
իսկ եթէ նրանք չեն կարող՝ հոգը պիտի տան
թիւրքերին: Այդ մի և նոյն նահանգապետը պըն-
դում է, որ նապաստներ բաժանվեն թիւրք պաշ-
տօնեաների ձեռքով:

ՆԱՄԱԿ ԹԻՐԳՈՒԹԵԱՆ

Կ. Պօլսի, ապրիլի 15-ին

Չեռ հասած ըլլալով Զէյթունի պայմանա-
գրութեան պաշտօնական, բուն օրինակը, կը
փութամ նոյնութեամբ հաղորդել ձեռք:

1. Ընդհանուր ներում (ամսի ստիւտ):
2. Զէյթունցիներուն կեանքի, ինչքի և պա-
տիւի ամենազգործնական ապահովութիւն եւրօ-
պական աւերութիւններու կողմէն:
3. Զէյթունի մէջ հիւպատոսներու հաստա-
տում:
4. Գնանեալ տուրքերէ, զանազան դրամա-
կան փոխառութիւններէ գոյացած 35,000 ոսկի
պարտքին ջնջում:
5. Եկայեքական չորս անունին ներքե 6500
ոսկիի վճարում զէյթունցիներուն, իբր պատե-
րագական առգանք:
6. Տուրքերու դրոյթեան փոփոխութիւն: Ա-
յէ ետքը անոնք միայն պէտք վճարեն ո և է
տուրք, երբ հաստատուի թէ կարողութիւն ունեն:
7. Ալի պէյը և իրեն նման ուրիշ համբաւ-
ւոր չարագործները զինուորական ատենի առջև
դատել և խտուր պատժել:
8. Զէյթունցիներու կողմէն գրաւուած զէնքե-
րու յանձնումը:
9. Վերջերս այրած գործողներ վերաշինու-
թիւնը կառավարութեան ծախսերով, և առժա-
մանակեայ կերպով 400 հոգիէ բաղկացած զօրա-
գումար մը ներկայութիւնը վերաշինուած զօրա-
նոցին մէջ:

